
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԸ

ԱԲԱԶՅԱՆ Ա. Հ.

Ժամանակակից հայերենում արմատական ածականները փոքր թիվ են կազմում: Առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը առաջացել և առաջանում են ածանցման, ինչպես նաև բառաբարդման ճանապարհով: Այսպես, օրինակ, գունանուններից պարզ են միայն կանաչ, կարմիր, կապույտ, ճերմակ, սպիտակ, սև ածականները, որոնցից վերջին երկուսն էլ փոխառություն են պարսկերենից¹, իսկ դեղին-ը բաղադրյալ է (դեղ+ին): Ինչպես² ս պետք է անվանվեին բազմազան գույներն ու երանգները, եթե ոչ բառաբարդմամբ:

Հայտնի է, որ ածականների նախնական հիմքն ու կմախքը կազմում են արմատականները, որոնք էլ հենց որակական ածականներ են (հարաբերականների կարևորագույն հատկանիշներից մեկը կազմությամբ բաղադրյալ լինելն է): Արմատական ածականների քննությանը անդրադարձել է ականավոր լեզվաբան Հ. Աճառյանը³ և ներկայացրել 697 ածականից բաղկացած մի ցուցակ: Այստեղ ընդգրկված բառերը ժամանակակից հայերենում առհասարակ չեն օգտագործվում կամ էլ որպես ինքնուրույն բառեր կիրառելի չեն, օրինակ. ազան, ախերակ, ախնթոր, աղկաղկ, ամոք, անոշտ, անքատ, ապախտ, արջն, մած, հոխորտ, քրքիր, ապախտ, սայթաք և այլն:

Մ. Ասատրյանը, ուսումնասիրելով պարզ ածականները, կատարում է որոշակի ճշգրտումներ, ավելացնում մի քանի բառ և ներկայացնում է 639 ածականից բաղկացած մի ցանկ³: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ցանկից շատ բառեր պետք է հանել: Ներկայացնենք դրանք առանձին խմբերով:

ա) Բարբառային բառեր (կամ բարբառներին անցած փոխառություններ), որոնք գրական լեզվում ընդունելի չեն, օրինակ՝ ազապ, ազիզ, ալվան, ախմախ, անոթի, աշկարա, բբրեջ, բիզ, բիջ, գեշ, գյադա, գոնջ, դանդալոշ, կակուղ, քարթու, դինջ, դմբո, եթիմ, գալում, թառլան, թարս, իսկը, իստակ, լակ, լաչառ, լղար, լուլ, լոթի, լոշտակ, կոկոզ, մարխոշ, մուռտառ, նաչար, նիսիա, ջոջ, սարսաղ, ջիվան, պուճուր, ջուխտ և այլն:

բ) Ածականներ, որոնք ներկայացվել են որպես արմատական, բայց իրականում պարզ չեն, ինչպես՝ ազդու, ազնիվ, ահեղ, անապակ, ապառիկ, ապիկար, ապուշ, առկա, առողջ, արգո, արդի, արժանի, բաժան, բեկ/-բեկ, բեղուն, բոի, բոնի, գաղտուկ, գաղտնի, գեղեցիկ, գողտրիկ, դեղին, դրացի, երկչոտ, զգոն, զոլ/-զոլ, զորեղ, ընտանի, թաքուն, խոհուն, խոիվ, խուժադուժ, խուժան, կանխիկ, կատաղի, կենդանի, կերկեր,

¹ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 195, 264:

² Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. I, Ե., 1952, էջ 26-32:

³ Տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Ե., 1973, էջ 59-67:

կծու, կորովի, կրճատ, հեղձուկ, հզոր, ճկուն, մատղաշ, մենակ, մոլի, մտերիմ, ներհուն, ռիսերիմ, ջքավոր, պես-պես, ջլուտ, սիրուն, վայրենի, վայրի, տարեց, տափակ, տափարակ, տգեղ, տկար, տհաս, փցուն, քսու և այլն:

գ) Արմատներ, որոնք ինքնուրույն գործածություն չունեն ժամանակակից հայերենում: Օրինակ՝ ախորժ, աղու, եղկ, լույծ, խուռն, հաշմ, շաղփաղփ, ցիր, թառամ և այլն:

դ) Բառեր, որոնք ոչ թե ածականներ են, այլ դերանուններ: Դրանք են՝ ամբողջ, ամեն, համայն, ողջ (որոշյալ), մյուս, նույն (ցուցական), ուրիշ, որոշ, այլ (անորոշ):

ե) Բառեր, որոնք ժամանակակից հայերենում գոյականներ են, ինչպես՝ ստրուկ, տաղտուկ, փորձ, փուշ, ավեր, գունդ, կարոտ, հտպիտ, շող, շփոթ:

զ) Հնացած և այժմ գործածությունից դուրս եկած բառեր, օրինակ՝ խոռ (նշանակում է՝ 1) փոս, 2) տխուր, խռով), ճամուկ (զարդարուն), փուտ (փտած), ցնոր (ցնորք): Գոշ բառը, ըստ Ստ. Մալխասյանի բառարանի, նշանակում է՝ 1) գորշ, 2) մազ, մորուք չաճող (պարսկերեն քյոսա բառից. բերված է օրինակ՝ Մխիթար Գոշ)⁴:

է) Գոց, աղվոր ածականները գործածական են արևմտահայերենում:

ը) Լոկ, սոսկ բառերը ոչ թե ածականներ են, այլ զիջական վերաբերականներ:

թ) Ցած – ժամանակակից հայերենում տեղի մակբայ է (բարձր բառի համաբանությամբ ցած բառից առաջացել և կիրառվում է ցածր ածականը):

Ստորև բերում ենք ժամանակակից հայերենի արմատական ածականների ցուցակը⁵՝ թվով 442 բառ (այստեղ կան օրինակներ, որոնք տարժամանակյա ստուգաբանությամբ տարրալուծելի են և ներկայացված են աստղանիշերով):

Ազահ	ամփոփ	առաքինի	բարգավաճ*
ազատ	այրի	առույգ	բարի
աժդահա	անագորույն	ավագ	բարկ
ալ	անդրանիկ	ավագակ	բարձր
ահյակ	անձուկ	արագ	բաց
աղճատ	անճոռնի	արբշիռ	բերրի
աղոտ	անջատ	արգավանդ	բիրտ
(դժգույն)			
աղքատ	անուշ	արդար	բյուր
ամայի	անքույթ (խաղաղ)	արի	բոբիկ
ամբարիշտ	աշխետ	արձակ	բոսոր
ամբարտա- վան	աշխույժ	արու	բովանդակ
ամեհի	ապիրատ	բազում	բորբ
ամուլ	ապստամբ	բամբ	բութ
ամուր	աջ	բարակ	բուն
ամուրի	առատ	բարբարոս	գաղջ
զանգուր	երիտասարդ	թափառ	խոժոռ

⁴ Մալխասյան Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. I, Ե., 2010, էջ 160:

⁵ Հազվադեպ գործածվող բառերի բացատրությունը տրված է փակագծում:

գարշ	երկայն	թափուր	խոլ
գեր	երկար	թեթև	խոշոր
գերի	երջանիկ	թեժ	խոհեմ
գիծ	զազիր	թերի	խոնավ
գիրգ	զանազան	թեք	խոնարհ
գծուծ	զգաստ	թթու*	խոպան
գոլ	զգույշ	թյուր	խոտան
գոհ	զելի	թշվառ	խոտոր
գող	զերծ	թոթով	խոր
գոռ	զիլ	թուխ	խորթ
գոռոզ	զով	թույլ	խոպոպ
գոս (չոր)	զվարթ	թունդ	խռով
գորշ	զվարճ (հզվդ)	ժանտ	խրթին
դաժան	զուլալ	ժիր	խրոխտ
դալար	զույգ	ժլատ	խուլ
դալուկ	զուսպ	ժպիրի	խուճուճ
դանդաղ	զուտ	իզուր*	խուփ
դառն	զուր	իրագեկ*	ծածուկ
դավաճան	զուրկ	լայն	ծակ
դատարկ	էժան	լավ	ծանծաղ
դժխեմ	ըմբոստ	լեղի	ծանոթ*
դժնակ	ընտիր*	լերկ	ծանր
դժնի	թանկ	լի	ծավի
դժվար	թանձր	լիրբ	ծարավ
դժպիրի (տհաճ)	թավ	լկտի	ծեր
դյուր	թարմ	լղպոր	ծույլ
դույզն	թաց	լպիրշ	ծուռ
կախ	կուռ	հեզ	հուսկ (վերջին)
կաղ	հախառն	հեզ	հույլ (ծույլ)
կամաց	հակիրճ	հեշտ	ձախ
կայտառ	հաղթ	հեղզ	ձիգ
կանաչ	համակ	հեռու*	ձրի (խսկց.)
կանուխ	համառ	հերոս	ձույլ
կապույտ	համառոտ	հիմար	ճաղատ
կարծր	համարձակ	հին	ճապաղ
կարկամ	համբակ (թերուս)	հիվանդ	ճապուկ
կարճ	համեստ	հլու	ճարպիկ
կարմիր	համր	հղի	ճարտար*
կեղծ	հանդարտ	հմուտ	ճերմակ
կեռ	հանդուգն	հնազանդ	ճիշտ
կիպ	հաշտ	հոժար	ճղճիմ
կիրթ	հապճեպ	հոլանի*	ճշմարիտ
կից	հաջող	հոծ	ճշգրիտ
կլոր	հասարակ	հոյակապ	ճոխ
կծծի	հաստ	հոռի	ճոռոմ
կոկ	հավասար	հով	մանր

կոշտ	հավաստի	հորդ	մատաղ
կռպիտ	հավերժ	հպատակ	մարմանդ (խակց.)
կոր	հավետ	հպարտ	մաքուր
կտրիճ	հատուկ*	հսկա	մեծ
կրտսեր	հարազատ	հստակ	մեղկ
կուզ	հարևան	հուժկու*	մեղմ
կույս	հարթ	հում	մերկ
կույր	հարմար	հույժ	մերձ
կուշտ	հարուստ	հուռթի	մոլար (մոլորված)
մոլոր	շտապ	պերճ	խուփ
մոտ	շուտ	պիղծ	սուրբ
մով	շփերթ	պինդ	սև
մոայլ	ռլոր	պղտոր	վաղ
մուգ	որբ	ջահել	վայել
մութ	որձ	ջերմ	վայրագ
մունջ	չարքաշ*	ջինջ	վառ
նեղ	չնչին	ջոկ	վատթար
նենգ	թոր	սակավ	վարար
նիհար	չքնաղ	սառն	վարժ
նկուն	պագշոտ	սեզ	վավեր
նման	պակաս	սեղմ	վեհ
նոսր	պաղ	սերտ	վեհեր
նոր	պայծառ	սթափ	վես
նսեմ	պանդուխտ	սին	վիթխարի
նվազ	պաշտպան	սինլքոր	վիատ
նվաստ	պառավ	սխալ	վճիտ
նուրբ	պատանի	սովոր	վսեմ
շեկ	պատեհ	սպիտակ	վստահ
շեղ	պատիր (խաբուսիկ)	ստահակ (պարսկ.)	վտիտ
շիլ	պատկան	ստամբակ (ըմբոստ)	տամուկ
շեն	պատշաճ	ստերջ	տարտամ
շիտակ	պատրաստ	ստոր	տաք
շոգ	պարապ	ստվար	տխմար
շողոմ	պարարտ	ստույգ	տխուր
շողոքորթ	պարզ	սրիկա	տոթ
շոայլ	պարթև	սուղ	տտիպ
շվայտ	պարկեշտ	սուտ	տրտում
ցամաք	ուշիմ	փափուկ	քաչալ
ցանցառ	ուրախ	փնթի*	քաջ
ցուրտ	ուրույն	փոս	քիչ
ուղիղ	փակ	փոքր	քնքուշ
ունայն	փաղաքուշ	փխուր	օժանդակ
ուշ	փարթամ	քաղցր	օտար

Այս ցանկում հիշատակված աղքատ, այրի, անդրանիկ, ապստամբ, ավազակ, բարբարոս, գերի, գիժ, գող, դավաճան, երիտասարդ, լեղի, խավար, խեղ, խոպոպ,

ծանոթ, ծեր, կտրիճ, կուզ, կույս, համբակ, հարազատ, հարևան, հարուստ, հերոս, հիվանդ, հպատակ, մութ, որբ, պանդուխտ, պաշտպան, պառավ, պատանի, ջահել, սխալ, ստահակ, սինըոր, սրիկա, սուրբ, սուտ, ցամաք բառերը երկխոսքիմասային արժեք ունեն: Սրանք թե՛ ածականներ են, թե՛ գոյականներ՝ կախված շարահյուսական կիրառություններից:

Մոտ և նման բառերը, ածականներ լինելուց բացի, նաև կապեր են (մոտ ընկեր, ընկերոջս մոտ, նման ընկեր, ընկերոջ նման):

Այսպիսով, ժամանակակից հայերենի արմատական ածականները չափազանց փոքրաթիվ են (ըստ վերոնշյալ ցանկի՝ 442)՝ ածանցավոր և բարդ ածականների համեմատությամբ:

**ПРИЛАГАТЕЛЬНЫЕ С НЕПРОИЗВОДНЫМИ
ОСНОВАМИ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

АБАДЖЯН А. Г.

Резюме

Прилагательные с непроизводными основами составляют в современном армянском языке ничтожно малую часть по сравнению с прилагательными с производными основами. Эти прилагательные являют собой основу для всех прилагательных в армянском языке.

На наш взгляд, из составленного Р. Ачаряном списка прилагательных с непроизводными основами (697) следует исключить 1/3 этих прилагательных, которые подразделяются на следующие группы: 1) диалектные слова или диалектные заимствования, 2) прилагательные с непроизводными основами, являющие собой по сути прилагательные с производными основами, 3) прилагательные, корни которых сейчас не употребляются в качестве самостоятельных слов в современном армянском языке и т. д.

Таким образом, список прилагательных с непроизводными основами в современном армянском языке насчитывает 442 прилагательных.